

«ՎՏԲ-ՅԵՌԱՆԿԱՐ+»



Դասական, ժամկետի ավարտին տոկոսագումարների վճարմանը

1. Ավանդի համար սահմանվում են հետևյալ ժամկետները և տարեկան տոկոսադրույքները.

Ավանդի նվազագույն գումար/ ժամկետ	31-60 օր	61-90 օր	91-180 օր	181-270 օր	271-365 օր	366-730 օր
ՀՀ դրամ` 100 000-ից	8.00%	10.00%	12.00%	12.50%	12.70%	13.00%
ԱՄՆ դոլար` 300-ից	4.50%	6.00%	7.50%	8.00%	8.50%	9.00%
Եվրո` 300-ից	1.00%	2.00%	3.00%	4.00%	5.00%	6.00%
Եվրո` 50 000-ից	1.50%	2.50%	3.25%	4.50%	5.50%	6.25%
ՌԴ ռուբլի` 10 000-ից	1.50%	2.50%	3.25%	4.50%	3.25%	3.50%

2. Ավանդը ներդրվում է ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից:
3. Ավանդն առանց լրացուցիչ մուտքագրումների և ելքագրումների է:
4. Ավանդը ներդրվում են ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո և ՌԴ ռուբլի արժույթներով:
5. Ավանդի ժամկետը ինքնուրույնաբար որոշում է Ավանդատուն` 31 օրից մինչև 730 օր ժամկետներից:
6. Ավանդի ներդրման նվազագույն գումարը.
 - ՀՀ դրամով ավանդների համար` 100 000 դրամ,
 - ԱՄՆ դոլարով ավանդների համար` 300 դոլար,
 - Եվրոյով ավանդների համար` 300 Եվրո,
 - ՌԴ ռուբլով ավանդների համար` 10 000 ռուբլի:
7. Ավանդի դիմաց տոկոսները վճարվում են ժամկետի ավարտին:
8. 180 օր ժամկետից ավել ժամկետով ավանդների համար, եթե ավանդի ներդրման պահին հաճախորդը հայտարարում է, որ հնարավոր է պահանջի ավանդային պայմանագրի վաղաժամկետ դադարեցում (բայց ոչ շուտ, քան ներդրման օրվանից 90 օր անց), Բանկն ի սկզբանե կնքում է ավանդային պայմանագիր` գործող տոկոսադրույքից 1% ցածր տոկոսադրույքով: Հետագայում ավանդային պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում տոկոսագումարի վճարումը կատարում է 90-րդ օրվա համար սահմանված տարեկան տոկոսադրույքով:
9. Ավանդի առավելագույն չափը սահմանվում է մինչև 50.0 մլն ՀՀ դրամ, 100 000 ԱՄՆ դոլար, 50 000 Եվրո և 2 500 000 ՌԴ ռուբլի:
10. Բանկը Ավանդատուին կարող է տրամադրել VISA Int. վճարային համակարգի պլաստիկ քարտ հետևյալ սակագնային պայմաններով`
 - բանկային քարտի թողարկում` 0 ՀՀ դրամ,
 - քարտի սպասարկման վճար` 0 ՀՀ դրամ,
 - քարտային հաշվի չնվազող մնացորդ` 0 ՀՀ դրամ,
 - քարտի սպասարկման բոլոր այլ սակագները` համաձայն Բանկում գործող սակագների:
 Քարտի տեսակը որոշվում է Ավանդի գումարից կախված` Բանկի համապատասխան որոշմամբ:
11. Ավանդը տոկոսային եկամտի հետ միասին վերադարձվում է պայմանագրով սահմանված ավանդի ժամկետի վերջին օրը, գումարը փոխանցելով Բանկում Ավանդատուի անունով բացված քարտային կամ այլ բանկային հաշվի:
12. Ավանդը կարող է վերադարձվել ժամկետից շուտ: Ավանդատուի կողմից Ավանդը ժամկետից շուտ պահանջի դեպքում, Բանկը կատարում է տոկոսների վերահաշվարկ` տվյալ պահին Բանկում բանկային հաշվի համար սահմանված տարեկան տոկոսադրույքով:
13. Ավանդի ձևակերպումը իրականացվում է Ավանդատուի` իր անձը հաստատող փաստաթղթերի ներկայացմամբ:
14. «ՎՏԲ-ՅԵՌԱՆԿԱՐ+» ժամկետային ավանդը ապահովագրված է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափերով: